ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սպիտակ համայնքը հանդիսանում է խոշորացված համայնք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների և 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացված ընտրությունների արդյունքների: Սպիտակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Արևաշող, Արջիովիտ, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարածոր: Համայնքի կենտրոն է հանդիսանում Սպիտակ քաղաքը:

Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիտակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:

Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար): Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Սպիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Սելջուկյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխանապետության մեջ: 14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա՝ Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է «Համամլու» կամ «Համամլի», որը հավանաբար առաջացել է պարսկերեն «համամ» (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Սպիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ: Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ. դեկտեմբերի 31-ին: Սպիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ: Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է տվել շաքարի գործարանը, որն արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում «Հայվերելակմեքենա» միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի: Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի և հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

Սպիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամք դրսևորած բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սփյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:
Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են կատարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ" փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, կոյուղագծերի կառուցում և վերանորոգում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սպիտակը գտնվում է Վանաձոր–Գյումրի և Վանաձոր–Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկներում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից 97 կմ: Համայնքի վարչական տարածքը 61531.36 հա է: Սպիտակի տարածքը լեռնային է, հյուսիսում ձգվում են Բազումի, իսկ հարավում Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի էրոզիոն-դենուդացիոն կառուցվածք: Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստավածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր: Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր երկրաշաժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ):

Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Մասիս երկաթգիծը:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սպիտակ համայնքի տարածքը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում: Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -30C, նվազագույնը՝
-35C, ամենատաք ամիսը հուլիսն է՝ +38C է, առավելագույնը +40C: Միջին հաշվով 0C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 500-550մմ է, գոլորշունակությունը՝ 900 մմ: Ձնածածկույթի միջին հաստությունը 18-20 սանտիմետր է, ձնածածկույթով օրերի թիվը՝ 75-80:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) Սպիտակ քաղաք	3.4կմ
1.2) Արևաշող բնակավայր	6.6կմ
1.3) Արջհովիտ բնակավայր	13կմ
1.4) Գեղասար բնակավայր	14կմ
1.5) Գոգարան բնակավայր	4.3կմ
1.6) Լեռնանցք բնակավայր	5կմ
1.7) Լեռնավան բնակավայր	11կմ
1.8) Լուսաղբյուր բնակավայր	23.1կմ
1.9) Խնկոյան բնակավայր	22.6կմ
1.10) Ծաղկաբեր բնակավայր	16.6կմ
1.11) Կաթնաջուր բնակավայր	25կմ
1.12) Հարթագյուղ բնակավայր	19.2կմ
1.13) Մեծ Պարնի բնակավայր	9.4կմ
1.14) Նոր Խաչակապ բնակավայր	12.9կմ
1.15) Շիրակամուտ բնակավայր	8կմ
1.16) Շենավան բնակավայր	8.6կմ
1.17) Ջրաշեն բնակավայր	19.1կմ
1.18) Սարալանջ բնակավայր	12կմ
1.19) Սարահարթ բնակավայր	9.1կմ
1.20) Սարամեջ բնակավայր	6կմ
1.21) Քարաձոր բնակավայր	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Համամլու» կամ «Համամլի»
3.Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	97կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	19կմ
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	Գոգարան-42կմ Բավրա-50կմ Թուրքիա-45կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-

3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	5000մ
4.Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1550մ
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	61531.36հա
6.Սահմանակից համայնքների անվանումները	Ապարան, Վանաձոր, Ստեփանավան, Գյումրի
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	municipalityspitak@gmail.com
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	Spitak.am
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+37493909363
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	(0255) 22500
11.Համայնքի հեռախոսային կոդը	0255
12.Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	23
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1804
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2022թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	43460
2. Գրանցված ծնունդների քանակը	569
2.Մահացության դեպքերի քանակը	394
3.Ամուսնությունների քանակը	206
4. Ամուսնալուծությունների քանակը	51
5. Տնային տնտեսությունների թիվը	11029
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	2249
7. Կենսաթոշակառուների քանակը	3369
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	2042

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	2
4. Մանկապարտեզների քանակը	8
5. Հանրակրթական դպրոցների քանակը	28
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2023թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	715093.68
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	112
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	5890

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2023թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	49924.54
2. Բնակավայրերի հողեր (հա)	1526.68
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	503.57
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	374.5
5. Հատուկ նշանակության	56.37
6. Հատուկ պահպանվող տարածքների	297.13
7. Անտառային	4800.93
8. Ջրային	258.07
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	10230
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	4196
11. Խոզերի գլուխաքանակը	1173
12. Գյուղատնտեսական տեխնիկա	

12.1 տրակտորներ (քանակը)	201
12.2 կոմբայններ (քանակը)	31
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	9222

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	213
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	96.8
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	141
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	121
6.2 Էքսկավատորների քանակը	10
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 Աղբատար մեքենաների քանակը	3
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	1
6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	52.8
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո 5 բանկ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2023թ.
1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	173 80
2.Վարչական ղեկավարների թվաքանակը	20
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	27
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	27

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Սպիտակի մշակույթի տան հին երաժշտական տեխնիկայի ամբողջական փոխարինում	Նախատեսվում է
Համայնքապետարանի նիստերի դահլիճի համար նոր սարքավորումների ձեռքբերում	
Մանկական բաժանմունքների կահույքի և տեխնիկայի ձեռքբերում «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի (ք.Սպիտակ, Շահումյան 105) և «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի (ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 1) համար	
Սպիտակ համայնքի կարիքների համար՝ ավտոաշտարակ և բենզինային գեներատորի ձեռքբերում	
Սպիտակ համայնքի կարիքների համար՝ Աղբատար մեքենա MA3 4907CO-030, Աղբատար մեքենա MA3 4901CO-030 (4x2), Աղբատար մեքենա MA3 KO-449-17, Բազմաֆունկցիոնալ ճանապարհային մեքենա MA3-6912C3-310, Ինքնաթափ մեքենա MA3 457121-537-000 և Աղբարկղների՝ 240լ – 50 հատ, 660լ – 150 հատ, 1100լ – 300 հատ, ձեռքբերում	
Մանկապարտեզ «Տաշիր»	Նախատեսվում է շինարարությունը հասցնել ավարտին և հանձնել շահագործման
Մանկապարտեզ մոդուլային	Նախատեսվում է կառուցել և հանձնել շահագործման
Թափառող կենդանիների վնասազերծում	Նախատեսվում է հնարավորինս նվազեցնել թափառող կենդանիների քանակը
Սպիտակ բնակավայրի կարիքների համար էներգախնայող led լուսատուների ձեռք բերում	Նախատեսվում է
Համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանություն	Նախատեսվում է միջոցներ ձեռնարկել համայնքի ղեկավարի իրավասության շրջանակում
Համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակի և որակի բարձրացում	Նախատեսվում է հասանելի դարձնել համայնքի բնակիչներին

Համայնքի ֆինանսական վիճակի բարելավում՝ եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման միջոցով:	Նախատեսվում է
Քաղաքացիական հասարակության սուբյեկտների համագործակցության ակտիվացում էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման միջոցով:	
Հայաստանի և արտերկրի համայքների հետ համագործակցության ընդլայնում	Նախատեսվում է իրականացնել համայնքային ենթակայության կազմակերպությունների շենքերի հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային և տեխնիկական վերազինման աշխատանքներ:
Համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական վերանորոգման, ջերմամատակարարման վերականգնման և գույքի ձեռքբերման աշխատանքներ	Նախատեսվում է ապահովել անխափան և նպատակային գործունեություն՝ աշխուժացնելով համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
Ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը	Նախատեսվում է ապահովել առողջ ապրելակերպի խրախուսումը, երիտասարդական ոլորտի մշտական զարգացումը
Համայնքում պայմաններ ստեղծել փոքր և միջին բիզնեսը զարգացնելու ուղղությամբ	Նախատեսվում է նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ նվազեցնելով գործազրկության մակարդակը:
Սոցիալական տարաբնույթ ծրագրեր	Նախատեսվում է նպաստել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը:
Համայնքի տարածքում գտնվող բնակելի շենքերի, համայնքային սեփականություն համարվող շենքերի և շինությունների պահպանում, շահագործում և նորոգում:	Նախատեսվում է
Կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում	Նախատեսվում է ավելացնել բակային խաղահրապարակների քանակը, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել համայնքի բնակչության մշակութային կյանքի և ազատ ժամանցի, հանգստի կազմակերպման ուղղությամբ: Իրականացնել համայնքի լուսավորության արտաքին ցանցի արդիականացում:

Համայնքի կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ	Նախատեսվում է նպաստել շրջակա բնական միջավայրի պահպանմանը
Ոռոգման ներհամայնքային համակարգի վերանորոգում, նոր համակարգերի անցկացում	Նախատեսվում է
Ներդնել աղբահանման վճար վճարողների հաշվառման արդյունավետ համակարգ	Նախատեսվում է բարելավել աղբահանության վճարների գանձման աշխատանքները:
Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն ու կիրառում	Նախատեսվում է Իրականացնել քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում
Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների մշակում	Նախատեսվում է